

ԵՊՀ հեռակա ուսուցման ընդունելության քննություն - 2020

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Ա մակարդակ

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *դ*:

- 1) զվար-, ըն-արմանալ, լեր-անալ
- 2) Նվար-, դր-ել, հար-աշաղախ
- 3) հաղոր-ել, վար-ապետ, խոր-անալ
- 4) անդա-ար, խոր-ուբորդ, զար-ուցիչ

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ց*:

- 1) ար-ունք, մտա-ածին, խուր-
- 2) ուր-, դադ-, նստակյա-
- 3) տր-ակ, հայա-ք, կ-կվել
- 4) ցն-ոտի, կ-կտուր, խ-կել

3. Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:

- 1) գիսաստղեր, Հովհաննես, երկրորդ
- 2) գրեթե, տանուտեր, բարևներ
- 3) գլուխ տալ, գիտակցորեն, միթե
- 4) սովորություն, պատանիները, լայնատերև

4. Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *ե*-ն է արտասանվում *է*:

- 1) զարկերակ, ուղերթ, տասներեք
- 2) կիսանեփ, առերևույթ, թեական
- 3) գուգերգ, ամենաերազկոտ, վերելք
- 4) գետեզր, ինքնաեռ, վերելք

5. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա.

- 1) հստակություն, ըմբշամարտ, թռչուն
- 2) թվարկություն, գրաշար, ձեռնափայտ
- 3) խոսակից, հնարամիտ, վնասազերծել
- 4) նկարակալ, շրջագայություն, զմրուխտյա

6. Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) Է-7
- 2) Գ-100
- 3) ԽԵ-45
- 4) ԼԱ -31

7.Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) անպատճառ - անպաճույճ, տիվ - ցերեկ, մառան - նկուղ
- 2) դժնի - անողորմ, գողտրիկ - թաքուն, ներհուն - լայնախոհ
- 3) հորդ - առատահոս, ջնարակ - շոկոլադ, ժուժկալ - զուսպ
- 4) կողով - զամբյուղ, եղնիկ - պախրա, առավոտ - այգ

8.Ո՞րը *արյունը ջուր դառնալ* դարձվածքի իմաստներից *չէ*:

- 1) արյունահեղությունը սովորական բան դառնալ
- 2) խիստ զայրանալ
- 3) ազգակցական կապերը վերանալ
- 4) սարսափելի վախենալ

9.Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) դշխո, ներբան, ներկա
- 2) երաժիշտ, համբավ, համարձակ
- 3) տկար, բժիշկ, սաղավարտ
- 4) հրաժեշտ, խարիսխ, կորիզ

10. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ *չեն*:

- 1) հայր *սուրբ* - *սուրբ* գործ
- 2) *բարդ* խնդիր - ցորենի *բարդ*
- 3) *բռի* մեջ պահել - *բռի* պահվածք
- 4) *արի* հայորդի - ներս *արի*

11.Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ *չունի*:

- 1) սնապարծ
- 2) սնդուկ
- 3) սնուտի
- 4) սնամեջ

12.Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) մանածաթել, մայրապետ, կատվառյուծ
- 2) նորափոփ, լուսաբաց, շեշտակիր
- 3) ձերբակալել, անարգել, փափկասուն
- 4) շողավարդ, շողարձակ, շնորհաշատ

13. Ո՞ր շարքում *ոչ* հոլովման *չենթարկվող* բառ կա:

- 1) կալվածատեր, սկեսրայր, աներ
- 2) երեցկին, տեգր, պարտատեր
- 3) տալ, հարսնաքույր, զուգընկեր
- 4) դասընկեր, տանտիկին, սկեսուր

14. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգնակի թիվն է կազմվում –ներ վերջավորությամբ:

- 1) օդաչու, ուղևոր, բեռնակիր
- 2) խցանահան, թվաշարք, տեղաբնակ
- 3) դերբայ, ամսաթիվ, պատմաբան
- 4) դասընկեր, խճաքար, ժամացույց

15. Ո՞ր նախադասության մեջ թվականի գրության սխալ կա:

- 1) Մշո «Ճառընտիրի» մի կեսը կշռում է տասհինգ կիլոգրամ, մյուսը՝ քսանութ կիլոգրամ:
- 2) Միջնադարի բանաստեղծ Ֆրիկը ապրել է տասներեքերորդ դարի երեսունական թվականներից մինչև տասնչորսերորդ դարի առաջին քառորդը:
- 3) Ավանդությունը Անիի եկեղեցիների թիվը հասցնում է հարյուր մեկի:
- 4) Գրիգոր Լուսավորիչը վաթսունհինգ օր քրիստոնեություն է քարոզում դարձի եկած Տրդատին:

16. Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:

- 1) որսացե՛ք, մուրում են, մխիթարեցին
- 2) կարդացին, կաղում էր, առավ
- 3) դարձել է, կորան, մոռացե՛ք
- 4) մոնչում են, տենչում էինք, հոգացել են

17. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) վատնել, փշրտել, երկրպագել
- 2) գլորվել, շնորհել, հավատալ
- 3) թարգմանել, վիճարկել, ուշանալ
- 4) կանգնել, փոշոտել, օգնել

18. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ ձև չկա:

- 1) Հասկանու՞մ եք, ոչ մեկ չփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու անօգ:
- 2) Չգիտեմ՝ ո՞րո՞ք կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
- 3) Ոչնչից և ոչ ոքից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:
- 4) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոք:

19. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Օրերը ցրտել են, իսկ Արարատյան դաշտում դեռ բերքահավաք է:
- 2) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
- 3) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:
- 4) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:

20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակբայներ:

- 1) եռակի, ցավոք սրտի, զօրուգիշեր
- 2) առանձնապես, բազմիցս, արտաքուստ
- 3) հանկարծ, անընդհատ, այնուհանդերձ
- 4) ամբողջովին, բերանքսիվայր, ի դեպ

21.Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության ստորադաս նախադասությունը:

Արտառոց է ինձ համար, երբ դրամատիկական երկը համեմատում են բամբակի, իսկ ներկայացումը՝ նրանից ստացված հագուստի հետ:

- 1) ստորոգելի
- 2) ենթակա
- 3) պայմանի պարագա
- 4) ժամանակի պարագա

22. Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

«Կրակից շագանակներ հանել» արտահայտությունն Լաֆոնտենի «Կապիկն ու կատուն»....., որտեղ կատուն, քաթերը , կրակից հանում է շագանակը, իսկ կապիկը՝

(առաջանալ, առակ, վառել, վայելել)

- 1) առաջ է եկել, առակից, վառում է, վայելում
- 2) առաջանում է, առակով, վառած, վայելում է
- 3) առաջացել է, առակից, վառելով, վայելում
- 4) առաջացավ, առակում, վառող, վայելում է

23.Ո՞ր նախադասության մեջ գործիական հոլովով արտահայտված որոշիչ կա:

- 1) Պապը մեծ համբերությամբ էր լսում յուրաքանչյուրին և իր բարի խորհուրդները տալիս:
- 2) Նա մեծ ախորժակով կերավ բրնձով փլավը:
- 3) Կամրջով անցնելիս սիրում էր հետևել ջրերի խաղաղ ընթացքին:
- 4) Այդ թագավորի օրոք են կատարվել նման վայրագություններ:

24. Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ չկա:

- 1) Ինքդ կիմանաս այդ ամենը, երբ ծնողներիդ կտակած կարողությունը ձեռք բերես:
- 2) Սենակ էի ես, երբ պատահեց այդ դեպքը:
- 3) Իմ հիմնական գործն այսուհետև բոլորին լսելն է ու նրանց ցանկությունները կատարելը:
- 4) Գրանցից մի քանիսի կեղևը շատ կարծր էր, իսկ երկուսինը՝ ուռած:

25.Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Աշոտ թագավորի հաղթանակներն այնքան ոգևորեցին իշխաններին, որ մոռացվեցին նրանց միջև եղած գժտությունները:

- 1) Աշոտ թագավորի հաղթանակներով ոգևորվելով՝ իշխանները մոռացան իրենց միջև եղած գժտությունները:
- 2) Աշոտ թագավորի հաղթանակները ոգևորեցին իշխաններին նրանց միջև եղած գժտությունները մոռացվելու չափ:
- 3) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելուց:
- 4) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելու շնորհիվ:

26. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Կաղնի տնկելիս պապը երևի պատկերացրել էր դրա այժմյան վեհությունն ու գեղեցկությունը:
- 2) Ծառի տակ հավաքվածները բննարկում էին այդ օրվա իրադարձությունները:
- 3) Քո ամենօրյա մարզումները շուտով կսկսվեն:
- 4) Նրան և ընտանիքին զարդարում էր առաքինի լինելը:

27. Նախադասության նշված անդամներից ո՞րը կարող է արտահայտվել ենթակայական դերբայով:

- 1) ժամանակի պարագան
- 2) որոշիչը
- 3) պարզ ստորոգյալը
- 4) ձևի պարագան

28. Ո՞ր նախադասության մեջ Լ-ից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Երեք օր է բացակայում են տնից և մենակ են թողել երկու անչափահաս երեխաներին:
- 2) Նա զգում էր որ այլևս չի տեսնելու արդեն հարազատ դարձած այդ մարդուն և սիրտը ցավում էր կորստի զիտակցությունից:
- 3) Մենք շատ բան ենք կորցրել պատմության քառուղիներում և կորցրածը գտնելու համար դեռ շատ պիտի դեզերենք:
- 4) Ոստիկանները ժամանեցին կեսօրին և ամբողջ գյուղը տակնուվրա անելուց հետո հայտնաբերեցին Մարգարին:

29. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Դրա շնորհիվ մարդիկ գազի հոտը կարող են զգալ նույնիսկ չնչին քանակի դեպքում: Այս նախազգուշական միջոցը հնարավորություն է տալիս անմիջապես զգալու գազի առկայությունը բնակարանում:
2. Բնական գազը, որ որպես վառելիք օգտագործվում է կենցաղում, չունի ո՛չ հոտ, ո՛չ գույն: Այդ պատճառով շատ դժվար է միանգամից «նկատել» կամ զգալ գազի արտահոսքը:
3. Գազը կարող է առաջացնել մահ թունավորում: Գազի արտահոսքը բնակարանում «նկատելու» նպատակով գազաբաշխման կայաններում գազը նախապես խառնում են սուր, տհաճ հոտ ունեցող նյութերի հետ:
4. Արտահոսքի ժամանակ դիֆուզիայի հետևանքով գազը տարածվում է ամբողջ բնակարանում: Գազի և օդի քանակների որոշակի հարաբերակցության դեպքում, երբ բնակարանը բոլոր կողմերից փակ է (հատկապես ձմռանը), զոյանում է խառնուրդ, որը կարող է պայթել, օրինակ, վառվող լուցկուց:

- 1) 2, 3, 1, 4
- 2) 4, 1, 2, 3
- 3) 2, 4, 3, 1
- 4) 3, 1, 4, 2

30. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) *որբուկ* երազներ
- 2) *արծվակեռ* քիթ
- 3) *ճերմակ* գաղափար
- 4) *կարմիր* սարսուռ

31. «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

*Որ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,
Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն:*

- 1) Քեռի Թորոսի
- 2) Դավթի
- 3) Փոքր Սհերի
- 4) Մեծ Սհերի

32. Ութտողանի բանաստեղծությունը, որի առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ, կոչվում է՝

- 1) սոնետ
- 2) գազել
- 3) տրիոլետ
- 4) հայրեն

33.Ա. Իսահակյանի «Հայրենի հողը» լեզունդում ի՞նչն է վիրավորված, խոսված ու հեռացած գորավարին վերադարձնում հայրենիք.

- 1) մանկության հիշատակներն ու սիրելի ընկերները
- 2) ներում հայցող փոքրոգի արքայի գղջման խոսքը
- 3) գուսանի հայրենի երգերն ու գեղջուկի տարած մի բուռ հայրենի հողը
- 4) սիրած աղջկա նկատմամբ անհուն սերն ու կարոտը

34.Ո՞ր ստեղծագործության հերոսուհին է Նազնիկը:

- 1) «Միրհավ» (Ակսել Բակունց)
- 2) «Փոստալ» (Գրիգոր Չոհրապ)
- 3) «Հարճը» (Դանիել Վարուժան)
- 4) «Մաադիի վերջին գարունը» (Ավետիք Իսահակյան)

35. Ի՞նչ ավարտ է ունենում Նար-Դոսի «Նեղ օրերից մեկը» պատմվածքը:

- 1) Գրախանութներում վաճառված իր գրքերի փողով Պատրիկյանը շտկում է նյութական վիճակը և շարունակում մնալ և աշխատել քաղաքում:
- 2) Հուսահատության ծայրակետին հասած Պատրիկյանը շարունակում է ապրել ծանր պայմաններում:
- 3) Պատրիկյանը լրագրի քարտուղարից պարտքով հինգ ռուբլի է վերցնում՝ բնակարանի վարձը վճարելու համար:
- 4) Պատրիկյանը, չկարողանալով վճարել բնակարանի վարձը, հեռանում է քաղաքից:

36. Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Էսպես է ասել հրնուց էդ մասին
Ֆարսի բյուրբյուրը, անմահ Ֆիրդուսին.
Ի՛նչը կրհատթի կյանքում հերոսին,
Թե չըլինին
Կինն ու գինին:*

- 1) «Փարվանա»
- 2) «Անուշ»
- 3) «Թմկաբերդի առումը»
- 4) «Հայրենիքիս հետ»

37.Ո՞ր բառն է բաց թողած:

*Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:*

- 1) տոկուն
- 2) հավետ
- 3) հավերժ
- 4) համառ

38. Տրված հատվածը Համո Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Նստում էին և սպասում
Մինչև պապը գար,
Մինչև բակում ծաղիկ եզան
Չանգը ծլնգար:*

- 1) «Պապը»
- 2) «Օրը մթնեց»
- 3) «Չես ասի ոչ մի բառով»
- 4) «Անձրև»

39. Տրված բառերից քանի՞սն են կազմությանը ածանցավոր.

կարևոր, դավանանք, գդակ, կիսատ, ագռավ, քարափ, նամակ, հայելի, ծածուկ:

40. Տրված կապերից քանի՞սն են նախադրություններ:

օրոք, հանդերձ, փոխարեն, մինչ, դեպի, իբրև, հանձին, հոգուտ:

41. Նախադասություններից քանի՞սն են բարդ (նախադասությունները կետադրված չեն):

- Դարձյալ մնում է մի բուռ հողի խորհուրդը իսկ հինգ միլիարդից միայն մեկ մարդու ներաշխարհը:
- Բոլորի հետ գնում էր եկեղեցի փորձելով հանապազօրյա աղոթքներով փոքր-ինչ քավել մեղքերը:
- Ամեն մեկը յուրովի պատկերացնելով կատարելությունը ափսոսանքով մեռնում է ձգտելով դրախտի:
- Հիմա որ երկրում է տեսնես իմ սիրելին անցկացնում իր օրերը:

42. Նախադասություններից քանիստ՞ն կետադրական սխալ կա:

- Երիտասարդը հետ նայեց. դիմացը կանգնած էր փարթամ մորուքով մի վանական՝ մագաղաթը սեղմած դալուկ ձեռքերի մեջ:
- Բայրոնը հափշտակությամբ ծանոթացավ վանքի հնագույն մագաղաթներին, նրան անչափ հուզել էին հայերի հարուստ մշակույթն ու արյունալի պատմությունը:
- Մատենադարանում այցելուները համակ ուշադրություն դարձած՝ լուռ էին ու ներամփոփ, ինձ թվում էր՝ նրանց ակնկալիքները հօդա էին ցնդել:
- Սարգսր Առաջինը ասուրերեն իր մի հիշատակարանը փորագրել է տվել մի քանի տեղ. միայն Վանի ժայռին՝ շինարարական քարերի վրա, նրանցից երեք հատ է գտնվել:

43. Նշվածներից քանի՞սի հեղինակն է Վահան Տերյանը:

«Կարծես թե դարձել եմ ես տուն», «Դանթեական առասպել», «Մի՞թե վերջին պոետն եմ ես», «Գիշեր և հուշեր», «Աշնան մեղեդի», «Մթնշաղի անուրջներ», «Մոմա», «Ոսկե շղթա»:

44. Տրված բառերից քանիստ՞ն ուղղագրական սխալ կա.

արթմնի, զարթուղի, տաղտկալի, թրթիռ, ամբասիր, բամբեր, դողերոցք, ուղղարկել:

45. Նշել այն հատուկ անունների համարները, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով.

1. ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԳ, 2. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, 3. ՎԱՆԱ ԼԻՃ, 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, 5. ՆՈՐ ԶԵԼԱՆԳԻԱ, 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 7. ՕՆՈՐԵ ԳԸ ԲԱԼԶԱԿ, 8. ՄԻԶԱՅԵԼ ՏԵՐ- ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, 9. ՄԵԾ ՄԱՍԻՍ:

46. Ո՞ր շարքերի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով.

1. արտիստ, անշուշտ, անփորձ, աղտեղություն
2. արտեզր, ավազակ, առավոտ, աքսոր
3. բանալի, բանջարեղեն, բարբարոս, բարեխառն
4. արթուն, արմավենի, արփի, աքցան

47. Ո՞ր շարքերի բոլոր բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են փակ.

1. աջհամբույր, տնկարան, ենթարկվել
2. դաջվածք, վայրկյաններ, ընդունված
3. համրիչ, պատճառներ, անցկացնել
- 4 . կրծքավանդակ, ընտրարշավ, հնձվոր

48. Որո՞նք են պարզ համառոտ նախադասություն:

1. Լույսը շուտով կբացվի:
2. Երիտասա՛րդ, մի՛ ընդհատեք:
3. Վերջապես խախտվեց լռությունը:
4. Իհարկե, հաղթելու ենք:

49. Նշված հեղինակներից ովքե՞ր են ստեղծագործել արևմտահայերենով:

1. Մուրացանը
2. Խաչատուր Աբովյանը
3. Հակոբ Պարոնյանը
4. Հրանտ Մաթևոսյանը
5. Միսաք Մեծարենցը

50.Տրված ստեղծագործություններից որո՞նց հեղինակն է Ալեքսանդր Շիրվանզադեն.

1. «Պատվի համար», 2. «Առաքյալը», 3. «Ավելորդը», 4.«Մամվել», 5. «Արտիստը» , 6. «Թուրքի աղջիկը»:

Բ մակարդակ

51. Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Հովվի աղջիկը՝ Վիկտոր-ն(1), փոքրիկ մա-աղն(2) ուսին, նստել էր պաղպաղ-ն(3) աղբյուրի մոտ, նայում էր դիմացի լեռան կանաչագարդ լանջին մա-աղած(4) ոչխարի հոտին: Նրա սիրտը մ-մոռմ(5) էր, երբ հիշում էր, թե ինչպես տարիներ առաջ Ա-թամար(6) կղզու՝ փ-ող(7) ծառաստաններով շրջապատված նորաշեն վանք ու-տի(8) գնալիս ականակի-(9) Վանա լճի ափին թուրք ելուզակները վիրավորեցին կտրի-(10) եղբորը:

- 1) 2-իւ, 5-ր, 8-դ, 9-տ
- 2) 3-ու, 7-թթ, 8-դ, 10-ճ
- 3) 4-իւ, 5-ր, 6-դ, 10-ճ
- 4) 1-յա, 3-ու, 6-դ, 9-տ

52. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում գծիկով.

- 1) բարակ(մարակ), հինգ(վեց), բուք(բորան), հասարակական(քաղաքական)
- 2) թելիկ(մեղիկ), ավել(պակաս), անուն(ազգանուն), դուռ(դռան)
- 3) գնալ(գալ), դեփ(դեղին), ձեռք(բերում), ասած(չասած)
- 4) մորե(մերկ), ընկեր(բարեկամ), տուն(թանգարան), շիփ(շիտակ)

53. Տրվածներից ո՞րը, ավելանալով *գիշեր* բառին, չի արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) խավարչտիմ
- 2) ամենակուլ
- 3) դավաճան
- 4) մահահոտ

54. Ո՞ր բառի բացատրությունն է սխալ:

- 1) **հեյլեն** - հույների հին անունը
- 2) **քարակ** – որսկան շուն
- 3) **արամբի** - սև ձի
- 4) **երկարածիտ** - երկար վիզ ունեցող

55. Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Նա երկու մասի բաժանեց. մի մասը փաթաթեց բրդյա կտորի մեջ և պահեց դուրս ցցված մի տակ, մյուսը նորից մեջ լցրեց:

(1. ժայռ, 2. ոսկի, 3. հավասար, 4. պարկ)

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 3, 1, 4
- 3) 4, 3, 1, 2
- 4) 1, 3, 4, 2

56. Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.

- 1) ընչաքաղց, նյարդայնանալ, ընդեղեն, քառամյա
- 2) բազմապիսի, երկվորյակ, խաժակն, համալսարան
- 3) կտրել, հարցուփորձ, թանձրանալ, տնանկ
- 4) անթացույ, մանկամիտ, մանրախնդիր, ընչացք

57. Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հոդի գործածության սխալ կա:

- 1) Աղջիկը Աշոտի հետ ծանոթանալուց հետո ինքնամիտի էր դարձել:
- 2) Դպիրները խոնարհ շարվել էին դահլիճի դռան մոտ՝ վեհափառի աջն համբուրելու համար:
- 3) Սուրհանդակն շտապում էր ժամ առաջ հասնել ամբոց:
- 4) Այս երիտասարդը սկսնակների մեջ ամենաշնորհալին է թվում:

58. Ո՞ր տարբերակում ընդգծվածը ուղիղ խնդիր չէ:

- 1) Չեռքերիս հետ նրա մեջ
Սիրոս էլ լվանամ:
- 2) Երբ **Հայաստան** են ասում,
Քարն արթնանում է քնից:
- 3) Եվ **աստղերը** երկնքից
Ականջիդ բան են ասում:
- 4) Եվ հոգիս **աչքերը** սրբում,
Սթափված կանգնում է կողքիս:

59. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Նայելով հարևանիս՝ ընկերս հետաքրքրվեց, թե վիրահատությունից հետո ինչպես է նա իրեն զգում, ապա հուսադրող ձայնով ավելացրեց, որ քիչ էլ նա դիմանա, և ամեն ինչ լավ կլինի:

- 1) - Վիրահատությունից հետո ինչպե՞ս ես զգում,- նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ապա ավելացրեց հուսադրող ձայնով,- քիչ էլ դիմանաք, և ամեն ինչ լավ կլինի:
- 2) - Վիրահատությունից հետո ինչպե՞ս է նա զգում,- նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ապա ավելացրեց հուսադրող ձայնով.- քիչ էլ դիմանա, և ամեն ինչ լավ կլինի:
- 3) - Ինչպե՞ս ես զգում քեզ վիրահատությունից հետո,- նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ապա հուսադրող ձայնով ավելացրեց.- քիչ էլ դիմացի՛ր, և ամեն ինչ լավ կլինի:
- 4) - Վիրահատությունից հետո ինչպե՞ս է զգում իրեն,- նայելով հարևանիս՝ հետաքրքրվեց ընկերս, ապա հուսադրող ձայնով ավելացրեց.- քիչ էլ դիմանաս, ամեն ինչ լավ կլինի:

60. Տրված նախադասության մեջ ի՞նչ անդամ է հարակատար դերբայը:

*Հոգնած նայում եմ ճամփաներին.
Մերմնացանները չդարձան տուն:*

- 1) ստորոգելի
- 2) որոշիչ
- 3) պատճառի պարագա
- 4) ձևի պարագա

61. Ո՞րն է Պ. Դուրյանի գլխավոր մտահոգությունը «Իմ ցավը» բանաստեղծության մեջ:

- 1) առանց սիրո վայելքի կյանքից հեռանալը
- 2) ճակատագրի պարտադրած մշտական ցավն ու տառապանքը
- 3) թշվառության մեջ գտնվող հայրենիքին առանց օգնած լինելու մեռնելը
- 4) երիտասարդ տարիքում մեռնելը

62. Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե
2. Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
3. Արևն ամռան ու ձմռվա վիշապաձայն բուքը վսեմ
4. Ու հնամյա քաղաքների հագարամյա քարն եմ սիրում

- 1) 1, 3, 2, 4
- 2) 3, 2, 1, 4
- 3) 1, 4, 3, 2
- 4) 3, 2, 4, 1

63. Տրված բառերից քանիսի՞ կազմությունն է՝ նախածանց+արմատ+վերջածանց.

ապստամբություն, անհեռատես, անարգանք, ունեցվածք, դժկամորեն:

64.Բառագույգերից քանի՞ սն են կազմված հականիշներից.

պերճ - անշուք, հաստատուն - անկայուն, հոռետես - լավատես, լայնաթիկունք - պարթև, մեծահարուստ - ընչագուրկ, կալանավորել - ձերբազատել, ակնածել – հարգել:

65.Տրված նախադասության ձևաբանական վերլուծության տարբերակներից քանիստ՞ն սխալ կա:

Նրանք երկար ժամանակ շարունակեցին խոսել այդ դեպքից՝ լիովին անէացած ու ամբողջովին կլանված դրանով, մինչև հասչտասպ եկան ու հայտնեցին, որ գնացքի մեկնումի ժամը մոտ է, և անմիջապես պետք է երկաթուղային կայարան գնալ:

- **շարունակեցին** -է խոնարհման պարզ բայ, անցյալ կատարյալ
- **անէացած** -սոսկածանցավոր բայ, հարակատար դերբայ
- **եկան** -անկանոն բայ, չեզոք սեռ
- **պետք է գնալ** -ա խոնարհման պարզ բայ, հարկադրական եղանակ

66.Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն անկախ դերբայներ են:

1. վխտալ, փախչել, ընթերցել, հագել
2. ուրախացնել, մոտենալիս, ծիծաղել, նստած
3. ծխալիս, հանգչող, կպած, մեծանալ
4. աղացել, հեռանալ, տեսնել, իջնել

67. Ո՞ր շարքերի բոլոր բառերում *երկինջյունի* հնչյունափոխություն կա.

1. լուսատու, ուսուցապետ, ալեհույզ
2. բուրումնալից, փութաջան, ցուցասրահ
3. լրագիր, սենեկապետ, խուզարկու
4. արնաշաղախ, ալրաղաց, գունագեղ

68. Մտքերից որո՞նք են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Մարդկությունը հին աշխարհի ճարտարապետական կոթողներից յոթին հրաշալիքներ է անվանել: Դրանցից մեկը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է՝ ամբողջովին կառուցված սպիտակ մարմարից:

Եգիպտոսում իշխող Պտղոմեոս թագավորը որոշում է լուսավորել Ալեքսանդրիայի նավահանգիստը՝ կառուցել մի ուղեցույց աշտարակ, որպեսզի ականակիր գիշերներին քաղաքին մոտեցող նավերը կարողանան շրջանցել ժայռոտ խութերը: Միևնույն ժամանակ աշտարակը ծառայում էր որպես դիտակետ: Նրանում տեղադրված հայելիները հնարավորություն էին տալիս հայտնաբերելու թշնամիների նավերը:

Հետաքրքիր է «փարոս» անվանման ծագումը: Աշտարակը հիմնվեց ափամերձ մի կանաչազարդ կղզակի վրա, որն առագաստի տեսք ունենալու պատճառով կոչվում էր Ֆարոս, այսինքն՝ առագաստ: Երբ կղզու վրա կառուցեցին լուսատու աշտարակը, այն նույնպես սկսեցին այդպես անվանել:

Հետագայում «ֆարոս» բառն արդեն ձեռք բերեց այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը (այն մեզանում ի հայտ է եկել ավելի ուշ) փոխարինվեց «փ» հնչյունով:

1. Քանի որ կառուցված աշտարակը առագաստի տեսք ուներ, կոչվեց Ֆարոս, որն էլ հետագայում ձեռք բերեց այժմյան իմաստը:
2. Պտղոմեոսը որոշեց ուղեցույց աշտարակ կառուցել, քանի որ գիշերներով Ալեքսանդրիային մոտեցող նավերի ճանապարհը վտանգավոր էր:
3. Հին աշխարհի յոթերորդ հրաշալիքը Ալեքսանդրիա քաղաքի հանրահայտ փարոսն է:
4. Քանի որ այն ժամանակ հայերենում *ֆ* հնչյուն չկար, փոխառյալ բառը տառադարձվեց որպես *«փարոս»*:
5. Փարոսը ծառայում էր Ալեքսանդրիայի նավահանգիստը թշնամիների հարձակումներից ապահով դարձնելուն:

69. Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Բոլոր շաղկապներն ըստ կազմության պարզ բառեր են:
2. *Մակայն*-ը կարող է կիրառվել և՛ որպես շաղկապ, և՛ որպես վերաբերական:
3. *Թե*-ն կարող է կիրառվել նաև որպես համադասական շաղկապ:
4. *Մինչ, մինչև, մինչև որ, մինչև իսկ* բառերը ստորադասական շաղկապներ են:
5. Շաղկապները երբեմն կարող են դառնալ նախադասության անդամ:
6. Շաղկապները բառային նյութական իմաստ չունեն:

70. Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Բոլոր բայերից հնարավոր է կազմել պատճառական բայեր *ացն, եցն, ցն* ածանցներով:
2. *Ան, են, ն, չ* բայական ածանցները ունեն սուկ բայակազմական արժեք:
3. Սուկածանցավոր բայերից *վ* ածանցով կրավորականներ չեն կազմվում:
4. *Ն, չ* սուկածանց ունեցող բոլոր բայերը չեզոք սեռի են:
5. Անցյալ կատարյալում *ն, չ* սուկածանցները ոչ միշտ են ընկնում:
6. *Ան* և *են* սուկածանց ունեցող բոլոր բայերը *ա* խոնարհման են: